Յիսուսի Քրիստոսի Ս. Յարութեան տօների առթիւ Կաթուղիկոսական Տեղակալ Տէր Գէորգ Արքեպիսկոպոսի ստացած և փոխանակած հեռագրեր.

ԹԻՖԼԻՍ

Կովկասեան Փոխարքայ Գրաֆ Իլլարիոն Իվանովիչ Վորոնցով Դաշկովին.

Էջմիածնի միաբանութիւնը և ես անձամբ ունենք պատիւ յարգանօք շնորհաւորել Ձերդ Պայծառափայլութեանը Ս. Յարութեան հրաշափառ տօնը՝ աղօթելով Յիսուս Քրիստոսին շնորհելու Ձեզ, բարեպաշտուհի Կոմսուհի Ելիսավետա Անդրէեվնային և Ձեր բոլոր ընտանիքին առողջութիւն ու բարօրութիւն.

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս.

(Պատասխան) ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոսին.

Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի։ Ամուսինս և ես ի սրտէ շնորհակալ ենք Ձեզնից և միաբանութիւնից շնորհաւորութեան և բարեմաղթութիւնների համար։ Շնորհաւորում ենք հրաշափառ տօնը։

Գրաֆ Վորոնցով.

Կ. Պոլսից ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոսին.

Զատկի առթիւ մատուցանում ենք Ձեզ ինչպէս և միաբանութեան բարեմաղթութիւններ, շնորհաւորութիւններ։

Պատրիարքական Տեղապահ Վահրամ Արքեպիսկոպոս.

(Պատասխան) Կ. ՊՕԼԻՍ

Պատրիարքական Տեղապահ Վահրամ Արքեպիսկոպոսին.

Ընդունեցէք մեր շնորհակալութիւններն ու շնորհաւորութիւնները.

Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս.

Երուսաղէմից ԷՋՄԻԱԾԻՆ

Կաթուղիկոսական Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոսին.

Շնորհաւորում ենք Զատիկը։ ցանկանում ենք երկար երջանիկ կեանք.

Տեղապահ Դանիել Արքեպիսկոպոս.

(Պատասխան) ԵՐՈՒՍԱՂԷՄ

Պատրիարքական Տեղապահ Դանիէլ Արքեպիսկոպոսին.

Ընդունեցէք իմ շնորհակալութիւնը և շնորհաւորութիւնները.

Տեղակալ Գեորգ Արքեպիսկոպոս.

Յիսուսի Յարութեան Զատկի կիւրակէին Ս. Պատարագ մատոյց Տեղակալ Տ.Գէորգ Արքեպիսկոպոսը։ Շնորհաւորելու համար ներկայացան Նորին Ամենապատուութեան

Նախքան Ս. Պատարագը, որ սկըսուեց առաւ. 9½ ժ.

1. Մայր Աթոռի միաբանութիւնը և շրջակայքի վանահայրերը.

2. Գործակալի հետ միասին Վաղարշապատի քահանաները.

Ս. Պատարագից յետոյ.

3. Սինոդի ծառայողները.

4. Ճեմարանի ուսուցչական խումբը.

5. Ճեմարանի բոլոր աշակերտները վերակացուների հետ միասին տեսուչ Հ. Բագրատ վարդապետի առաջնորդութեամբ.

6. Վաղարշապատի երկու սեռի դպրոցների հոգաբարձութիւնը.

7. Էջմիածնի գաւառապետը, գաւառական բժիշկը, հաշտարար միջնորդը, զանազան հիմնարկութիւնների ծառայողներն և ժողովրդի զանազան դասակարգի անձինք։